Տախտակս չինեալ նստելոյ տեղիք իւրեանց հանդէպ եկեղեցոյն, ի նոյն փութային նստել և ոչ անգամ յերեսս խաչ նկարել, քանզի զծունր կրկնել յերազին ոչ են տեսեալ, և թէ յեկեղեցի մտանելն նոցա ոչ ոք տեսեալ երբեք. և թէ լիցի ի կիրակէն գալ, ահա՛ Քրիստոս պատարագ մատչի և նոքա նստեալ յոտընկալս տեղիս տախտակաց և ըստ բարուց իւրեանց ըզհաճոյսն բարբանջեն, զորոց զկինս գովեն և զոմանց զտղայս դրուատեն և զայլս տաղտկամ յասելն և ոչ համարիմ արժանիս զաղփաղփունս[1]) ընուլ ի սուրբ լսելիսդ։ Քանզի չունք եւ պոռնիկք եւ պղծագործք եղեն տեարք կանոնաց, զի կամէի զամենայն եկեղեցոյսն յանուանէ ասել, զչկամելն իմ ի վերնոյն բանից ծանիցիս։

Զիա՞րդ եւ ոչ կացուցանեմ արժանիս պարսաւանաց, որք են արժանապէս արժանիք ասիցս ըստ արժանեաց. զի ի վերայ այսր ամենայնի զոր լուեալ էաք ի պատմագծից՝ եթէ թագաւորք խրոխտաբար ի մեծութիւնս փքացեալք առնէին զկամս, այսօր տեսաք աչօք մերովք ի սոսա. քանզի և յայլազգիսն ասէաք մեղս եւ գրեալ էին փոքունց կամ զմեծամեծաց, զի ի Մեծէն Ներսիսէ, որ տարի է ՌԲՃ, զայս ոչ ոք գործեաց եթէ ոչ Ստամպօլոյ վերոյ ասացեալ իշխանք ե եկեղեցոյն, որ զգիրն մօտրեցին թէ Հոգով և մարմնով կանգնեալ կամք։ Զայս Սուրբ Սարգսցին՝ թէ ի նախանձու և կամ յինքնահաւանութենէ՝ ի ժողովն ոչ կային և զիւրեանց եկեղեցոյ մօտրն կոտրեցին թէ Մեզ պիտոյ չէ, այլ զաւագիրիցունն[2]) բռնութեամբ առին, և այր մի ևս որ յառաջագէմն ընդ նոսա էր։ Արք Իդ սատանայի մարգարէք, խաւարին ժամք և ոչ տուընջեան, մտին ի

1) զաղբաղբունս. 2) զաւարիրիցունն.